Հաստատում եմ՝
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր՝
Ռուբեն Միրզախանյան

ԿԱՐԾԻՔ

Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանի
Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի
2020թ. սեպտեմբերի 16-ի h. 3 նիստի՝
Ռուբեն Գագիկի Ոսկանյանի
«Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանների տարածքի
կազմակերպման դիզայներական խնդիրները»
ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն»
մասնագիտությամբ
արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության վերաբերյալ

Նիստին մասնակցել են Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ս. Մելիքյանը, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ. Հակոբյանը, Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Հակոբյանը, արվեստագիտության թեկնածու Ա. Բաղդասարյանը, արվեստագիտության թեկնածու Ս. Գրիգորյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու Զ. Մալոյանը, ասիստենտ Վ. Գամաղելյանը և ամբիոնի մյուս անդամները:

Ատենախոսությունում ընդգրկված է պատմական մեծ ժամանակաշրջան՝ բրոնզեդարյան դամբարանադաշտերից մինչև 20-րդ դարի շինություններ: Գլխավոր շեշտը դրված է Աշտարակ քաղաքի հիմնական տարածքում գտնվող հուշարձանների վրա: Նշենք, որ 20-րդ դարի վերջում մեծացել է հետաքրքրությունը պատմական հուշարձանների և դրանցում ներկայացվող մշակութային արժեքների նկատմամբ:

Ատենախոսության հեղինակը փորձ է կատարում վերլուծել Աշտարակի պատմա-ճարտարապետական հուշարձանների առանձնահատկությունները, տալիս դրանց թանգարանացման ամենահարմար առաջարկները:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից, չորս հավելվածներից:

Ներածության մեջ հեղինակը հիմնավոր ներկայացնում է բոլոր պահանջվող դրույթները: Այստեղ, Աշտարակ քաղաքի պատմամշակութային հուշարձանների տարածքների դիզայներական կազմակերպման խնդիրների բացահայտումն ու հայեցակարգային բնութագրերը լուսաբանվում և ենթարկվում են խորը ուսումնասիրության: Ի դեպ, դրանք կատարված են պատմական իրողության լուսաբանման և մասնագիտական՝ դիզայներական տեսանկյուններից:

Աշխատության առաջին գլուխը կրում է «Պատմատեսական և զուգահեռների ընդհանուր տեղեկություններ» խորագիրը: Այստեղ երեք ենթագլուխներով ուսումնասիրում է Աշտարակի պատմամշակութային ժառանգությունը՝ կատարելով դրանց խմբավորումն ու դասակարգումը: Գլխի առավել հետաքրքրական հատվածն է համաշխարհային պրակտիկայում ընդունված փոքր քաղաքների ժառանգության պահպանման և արդիականացման հարցը: Ատենախոսության հեղինակը առավել խորությամբ ուսումնասիրել է այդ ասպարեզը: Հաշվի է առնվել հուշարձանների պատմական զարգացումը, այն համադրվել է միջավայրի դիզայնի մեթոդական սկզբունքների հետ: Արդյունքում քաղաքի պատմամշակութային հուշարձանների տարածքի ուսումնասիրությունը դիտարկվում է երկու գոտիով: Առաջին գոտին ընդգրկում է Աշտարակի շուրջ եղած պեղման ենթակա վայրերը և այլ հուշարձանների տարածքները, երկրորդ գոտին՝ քաղաքի կորիզի տարածքը իր հայտնի հուշարձաններով:

Երկրորդ՝ «Աշտարակ քաղաքի շրջակա պատմամշակութային հուշարձանների տարածքի դիզայներական կազմակերպումը» խորագիրը կրող գլխում մանրամասնորեն ուսումնասիրվում է վերհանված հուշարձանների պատմական անցյալն ու ներկայիս վիճակը, առանձնացվում են Աշտարակի պատմամշակութային հուշարձանների տարածքները: Սույն գլխում առաջարկվում է համապատասխան գոտևորումներն ու համալիրի հնարավոր ձևավորման ձևերը: Ուսումնասիրության է

ենթարկվում Վերին Նավերի տարածքը, «Արծվի թև» հուշակոթողը, Խոջաբաղեր դամբարանադաշտը, Ուրարտական ջրանցքը, Ուլատիտիկ բնակավայրը:

Երրորդ՝ «Աշտարակ քաղաքի կորիզի հուշարձանների տարածքի դիզայներական կազմակերպումը» գլխում մանրակրկիտ հետազոտվում է Աշտարակի կորիզի տարածքի դիզայներական լուծումների հնարավորությունը:

Հետևողական ուսումնասիրման առարկա են կենտրոնի հուշարձանները՝

-հրապարակը, Սբ Մարիանէ եկեղեցին, Ուռուցը, մշակույթի տունը,

-բնակելի տների գոտին

-Բերդաթաղի հուշարձանները

-պաշտամունքային հուշարձանները

-պատմամշակութային այլ կառույցներ:

Գլխի վերջում ատենախոսի ներկայացված եզրակացության մեջ վերհանվում է արդեն Հայաստանում գոյություն ունեցող փորձը, շեշտադրելով պատմամշակութային տարածքների պահպանման, վերականգնման և վերակառուցման խնդիրներ, որոնք իրենց անմիջական տեղն են գրավում այդ քաղաքների ժամանակակից վերահատակագծման ընթացքում:

Եզրակացություններում արտացոլված են ուսումնասիրության ընթացքում վերհանված կարևոր դրույթները:

Ընդհանուր օգտագործված գրականության ցանկը ներառում է 37 աղբյուր, որից տասը էլեկտրոնային: Չորս հավելվածներում զետեղված են համապատասխան ուսումնասիրման ոլորտները, որոնք էլ արտացոլում են աշխատանքում ուսումնասիրվող նյութը:

Այս ամենի հետ մեկտեղ ներկայացնում են որոշ դիտողություններ.

-գրականության ցանկում ցանկալի կլիներ նշվեր աղբյուրների էջերի քանակը.

-ցանկալի կլիներ յուրաքանչյուր գլուխ ամփոփվեր եզրակացությունով (եզրակացություն առկա է միայն երրորդ գլխում).

-կարելի էր ատենախոսությունը շարադրվեր հնարավորինս մատչելի լեզվով:

Ծանոթանալով ատենախոսության բովանդակությանը՝ կարող ենք հաստատել, որ ատենախոսը ունի մասնագիտական բարձր մակարդակ, իսկ դիտողությունները կրում են մասնակի բնույթ:

Ատենախոսությունը ուսումնասիրվող նյութի իմացությամբ կատարված գիտական աշխատանք է, որը բավարարում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ դրա հեղինակ Ռուբեն Գագիկի Ոսկանյանը արժանի է ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանին:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ՝

Սաթենիկ Մելիքյան

Սաթենիկ Մելիքյանի
Ստորագրությունը հաստատում եմ

ՀՊՄՀ գիտ. քարտուղար՝ Մարիամ Իսպիրյան

17.09.2020թ.